ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 փետրվարի 2021 թվականի N 31- Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքը և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2021 թվականի հունվարի 14-ի N 6-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի կողմից 2021 թվականի փետրվարի 3-ին ներկայացված N 5 արձանագրությունը

ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված միջոցներից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սկսված պատերազմական գործողությունների հետևանքով Արցախի Հանրապետությունում զոհված Հրանտ Զավենի Պապյանի, Ավագ Գևորգի Ռևազյանի, Նորայր Սամվելի Շաղբաթյանի, Սարգիս Սլավիկի Յաղուբյանի, Արկադի Արսենի Մելիքբեկյանի և Կարեն Հրահատի Հակոբյանի հուղարկավորման ծախսերի փոխհատուցման նպատակով փոխանցել՝ 264 /երկու հարյուր վաթսունչորս/ հազար դրամ <<Եդեմ 1>> ՍՊԸ-ին և 190 /մեկ հարյուր իննսուն/ հազար դրամ <<Հայկ Սարդարյան>> ԱՁ-ին:

2. Մարզպետարանի աշխատակազմի գլխավոր քարտուղարին՝ անկանխիկ, բանկային համակարգի միջոցով ապահովել գումարների վճարումը:

ՄԱՐԶՊԵՏ Հ.ՉՈԲԱՆՅԱՆ

X

2021թ. փետրվարի 3
ք.Իջևան